

Առաջարկություններ՝ ուղղված  
ազատագրված կանանց և  
պրոֆացիայի կին շահառուների  
իրավունքների պաշտպանությանը և  
վիճակի բարելավմանը

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ

Երևան, 2024 թվական

Ազատագրկված կանանց առողջության պահպանման իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Արդարադատության նախարարությանը, Առողջապահության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը և Քրեակատարողական բժշկության կենտրոնին առաջարկում ենք.

- Վերանորոգման աշխատանքներ կատարել Քրեակատարողական բժշկության կենտրոնի՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում տեղակայված բժշկական ստորաբաժանմանը հատկացված սենյակներում՝ խոնավությունը վերացնելու և սանիտարահիգիենիկ բավարար վիճակ ապահովելու համար:
- Դիտարկել բժշկական սպասարկման սենյակները նոր գույքով համալրելու, հոսող ջրով և լվացարանով ապահովելու, այնտեղ սանհանգույց ներկառուցելու հարցը:
- Պայմաններ ստեղծել ստորաբաժանման բուժանձնակազմի ընդմիջման և հանգստի կազմակերպման համար:
- «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում բժշկական մեկուսացման և արտաքին բժշկական զննության անցկացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել: Բժշկական զննության սենյակը համալրել անհրաժեշտ բժշկական պարագաներով:
- Քայլեր ձեռնարկել ազատագրկված կանանց սպասարկող բուժանձնակազմի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու ուղղությամբ՝ դիտարկելով հաստիքների ավելացման և համալրման հարցը:
- Դիտարկել ստորաբաժանման բուժքույրերի հաստիքների ավելացման հարցն այնպես, որ հնարավոր լինի մասնաշենքերում զուգահեռ հերթապահություն ապահովել:
- Դիտարկել ստորաբաժանման բուժանձնակազմին ըստ անհրաժեշտության պարզևավճարներ և հավելավճարներ տրամադրելու, ինչպես նաև աշխատավարձը բարձրացնելու հարցը:
- Ազատագրկված կանանց և անչափահասների բժշկական սպասարկման և օգնության կազմակերպման առանձնահատկությունների վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ կազմակերպել ստորաբաժանման բուժանձնակազմի համար:
- Դիտարկել ազատագրկված կանանց շրջանում ՄԻԱՎ-ի, սիֆիլիսի և Հեպատիտ C-ի ռապիդ թեստավորումները քրեակատարողական հիմնարկ յուրաքանչյուր մուտքի ժամանակ անցկացնելու հարցը: ՄԻԱՎ-ի ռապիդ թեստավորման դեպքում յուրաքանչյուրի համար պահպանել 6-ամսյա ժամկետը: Ֆյուրոզրաֆիկ հետազոտություններն անցկացնել

յուրաքանչյուր կնոջ առաջնային մուտքի ժամանակ: Ազատագրկված կանանց շրջանում իրազեկման աշխատանքներ կատարել նշված թեստավորումների և հետազոտությունների կարևորության մասին:

- Մինչև 3 տարեկան երեխաներին իրենց ազատագրկված ծնողների հետ առողջապահական մարմինների բուժական հիմնարկներ ուղեկցելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր մշակել:
- Ապահովել ազատագրկված կանանց և իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների առողջապահական ծառայությունների տրամադրման, այդ թվում ՄԻԱՎ-ի հետազոտության և բուժման անընդհատությունը:
- Ընդլայնել ազատագրկված օտարերկրացի անձանց տրամադրվող թարգմանչական ծառայությունների շրջանակը՝ ներառելով բժշկական օգնության և սպասարկման ոլորտը:
- Քրեակատարողական բժշկության կենտրոնում ներդնել էլեկտրոնային բժշկության և հեռաբժշկության համակարգ: Կենտրոնն ընդգրկել Արմեդ և e-penitentiary համակարգերում: Էլեկտրոնային բժշկության և հեռաբժշկության համակարգերի գործարկումը հավասարապես հասանելի դարձնել ազատագրկված կանանց:
- Քրեակատարողական առողջապահության համակարգում հեռաբժշկության իրականացման կարգ մշակել:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում աշխատանքային պայմանների բարելավման համար Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Քայլեր ձեռնարկել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ:
- Քրեակատարողական հիմնարկի աշխատասենյակները վերանորոգել և համալրել նոր գույքով:
- Պայմաններ ստեղծել աշխատակիցների հանգստի և ընդմիջման կազմակերպման համար:
- Մեկուսարանի մասնաշենքի 2-րդ հարկում հսկիչների համար առանձին աշխատասենյակ նախատեսել:
- Կանանց տեղամասի մասնաշենքում աշխատակիցների համար առանձին սանհանգույց նախատեսել:

- Համապատասխան աշխատանքներ տանել՝ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում թափուր հաստիքների համալրման ուղղությամբ:
- Քայլեր ձեռնարկել աշխատակազմի համար սոցիալական բավարար երաշխիքներ ստեղծելու, աշխատավարձերը վերանայելու և երկսեռ աշխատակազմ ապահովելու ուղղությամբ:
- Կանանց ազատագրկման նկատմամբ գենդերազգայուն մոտեցումների վերաբերյալ դասընթացներ կազմակերպել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ողջ անձնակազմի համար:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանների բարելավման համար Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Դիտարկել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի շենքային պայմանների բարելավման առաջնահերթությունը: Հիմնանորոգման աշխատանքներ կատարել՝ բարելավելով մեկուսարանի և կանանց տեղամասի մասնաշենքերի, լոգարանների և սանհանգույցների, կարանտինային խցերի, պատժախցի, քննչական, ուսումնական, տեսակցությունների, տեսակապի, զննության անցկացման սենյակների, դպրոցի շենքի, մարզասենյակների, գրադարանների, զբոսախցերի պայմանները և սանիտարահիգիենիկ վիճակը:
- Քայլեր ձեռնարկել քրեակատարողական հիմնարկում խոնավության վերացման, օդափոխության համակարգի տեղադրման, իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման ուղղությամբ:
- Վերանորոգման աշխատանքներ կատարելիս դիտարկել անչափահաս աղջիկների, հղի և իրենց մոտ մինչև 3 տարեկան երեխաներ ունեցող կանանց ներհատուկ կարիքները: Նրանց մատչելի դարձնել սանհանգույցները և լոգարանները: Քրեակատարողական հիմնարկի խցերը կամ կացարանները հարմարեցնել նրանց կարիքներին՝ դիտարկելով այնտեղ լոգարան և սանհանգույց ներկառուցելու հարցը:
- Ազատագրկված անչափահաս աղջիկների համար քրեակատարողական հիմնարկում առանձին մասնաշենք նախատեսել:

Ազատագրկված կանանց կարանտինային բաժանմունքում տեղավորումը և խցերում կամ կացարաններում տեղաբաշխումն

արդյունավետ ձևով կազմակերպելու համար Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- *Դիտարկել Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կարանտինային խցերի քանակն ավելացնելու հարցը և նախատեսել բավարար թվով կարանտինային խցեր՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործած յուրաքանչյուր կնոջ պահանջված ժամկետով այնտեղ պահելու համար:*
- *Վերանորոգել առկա կարանտինային խցերը՝ ապահովելով անհրաժեշտ սանիտարահիգիենիկ վիճակ:*
- *Վերանայել խցերում կանանց տեղաբաշխման պրակտիկան՝ հնարավորինս ուշադրություն դարձնելով միմյանց քրեական գործերի նկատմամբ ունեցած վերաբերմունքին և հոգեկան առողջության կամ հոգեբանական վիճակին՝ բացառելու համար քրեական գործով կամ հոգեհուզական վիճակով պայմանավորված կոնֆլիկտային իրավիճակների առաջացումը:*

Ազատագրված կանանց հոգեբանական վիճակը բարելավելու և հոգեկան առողջությունը վերականգնելու նպատակով Արդարադատության նախարարությանը, Քրեակատարողական ծառայությանը և Քրեակատարողական բժշկության կենտրոնին առաջարկում ենք.

- *Վերանայել ազատագրված կանանց որպես կոնֆլիկտայնության կամ ագրեսիվության հակում ունեցող անձանց հաշվառելու պրակտիկան՝ շեշտադրելով խորքային հոգեբանական աշխատանքներ կատարելու կարևորությունը, ինչն իր հերթին կարող է վերականգնել քրեակատարողական հիմնարկի հոգեբանի նկատմամբ վստահությունը:*
- *Վերանայել ազատագրված կանանց հոգեկան վիճակի բարելավմանն ուղղված աշխատանքը՝ այն դարձնելով բազմամասնագիտական, ինչը կարող է ներառել հոգեբանի, հոգեբույժի և այլ մասնագետների համատեղ ջանքերը:*
- *Շեշտադրել հոգեբանական աջակցության ծրագրերի ընդլայնումը և հնարավորինս նվազեցնել հոգեմետ դեղերի՝ որպես քնի խանգարման խնդիրը կարգավորելու պրակտիկան:*
- *Ազատագրված կանանց հետ առողջության պահպանմանն ուղղված թեմաներով իրազեկման աշխատանքներ կատարել՝ այդ նպատակով համագործակցելով առողջապահական կազմակերպությունների հետ: Նրանց շրջանում բարձրացնել առողջ ապրելակերպի մասին*

իրազեկվածությունը՝ շեշտը դնելով այնպիսի թեմաների վրա, ինչպիսիք են հուզական բարեկեցությունը, մարմնի դրական ընկալումը:

- Ազատագրկված կանանց հետ խորհրդատվական և իրազեկման բազմաբնույթ աշխատանքներ կատարել՝ շեշտադրելով փոխօգնության մթնոլորտի ձևավորումը, հուզական գրագիտության բարձրացմանն ուղղված մասնագիտական աշխատանքը, ինչը կօգնի կոնֆլիկտներին արձագանքման գրագետ հմտություններ ձեռք բերել: Դա կարող է ներառել հետևյալ թեմաները՝ ինքնաճանաչման և հույզերի ճանաչման հմտություններ, գիտելիքներ հույզերի ժառանգման, էմոցիոնալ հիշողության, հուզական դաստիարակության մասին, հույզերի կարգավորման և ինքնատիրապետման տեխնիկաներ, կոնֆլիկտների առաջացման պատճառները, կոնֆլիկտների դրսևորման փուլերը և ձևերը, կոնֆլիկտների ժամանակ առավել հաճախ հանդիպող սխալները, կոնֆլիկտի հաղթահարման ուղիները, կոնֆլիկտների կառավարման տեխնիկաները:
- Ազատագրկված կանանց շրջանում ընդլայնել գրագետ ծնողավարման հմտություններին ուղղված աշխատանքը՝ շեշտադրելով հետևյալ թեմաների շուրջ գիտելիքի տարածումը՝ ծնողավարման ձևեր, դաստիարակության ոճեր, դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը և հետևանքները, երեխաների տարիքային ճգնաժամերը և դրանց հաղթահարման մեխանիզմները, մանկական տրավմաները և դրանց հետևանքները, երեխա-ծնող հուզական կապի ստեղծումը և ամրապնդումը, ծնողական սիրո, ջերմության, հոգատարության և խնամքի կարևորությունը, երեխաների կարիքները և սոցիալ-հոգեբանական պահանջումները, երեխաների իրավունքները, բռնության տեսակները, հետևանքները և կանխարգելման եղանակները:
- Իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների հետ հոգեբանական աշխատանքներ կատարելու նպատակով համապատասխան կարգավորումներ նախատեսել:
- Քրեակատարողական հիմնարկն ապահովել նեղ մասնագիտացում ունեցող հոգեբան-մասնագետով՝ իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների հետ համապատասխան աշխատանքներ կատարելու նպատակով:
- Ապահովել ազատագրկված օտարերկրացի կանանց հասանելիությունը հոգեբանական ծառայություններին:

Ազատագրկված կանանց բավարար սնունդ ստանալու իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Հանձնուքով փոխանցվող սննդի պահման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում:
- Ավելացնել ընդհանուր սառնարանների քանակը:
- Դիտարկել հանձնուքների ընդունման սենյակում ջեռուցման և օդափոխության համակարգ տեղադրելու հարցը:
- Դիտարկել հանձնուք փոխանցող անձանց համար սպասասրահ կառուցելու, այն սանհանգույցով և ջրով ապահովելու հարցը:
- Կանանց տեղամասի մասնաշենքի ճաշարանում լվացվելու հնարավորություն ստեղծել:
- Վերանայել քրեակատարողական հիմնարկներում հում սննդամթերք ընդունելու ընդհանուր արգելքը՝ հնարավորության դեպքում բացառություններ նախատեսելով իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների համար:
- Վերանայել իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների սննդի ընդունման հաճախականությունը՝ այն համապատասխանեցնելով տարիքային զարգացման առանձնահատկություններին:
- Ազատագրկված անձանց մասնավոր ընկերության կողմից սննդի պատրաստման և մատակարարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, սննդի որակի և կալորիականության փորձաքննություն կատարելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր նախատեսել:

Ազատագրկված կանանց անձնական հիգիենայի ապահովման նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Ազատագրկված կանանց անձնական հիգիենայի ապահովման նպատակով «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ավելացնել տաք ջրի տրամադրման հաճախականությունը: Բացառել սառը ջրի մատակարարման հետ կապված խնդիրները:
- Լոգարանները համալրել անհրաժեշտ գույքով:

- Ապահովել կանանց հասանելիությունը սանիտարական սրբիչներին, տամպոններին և արյան հետքերը հեռացնող միջոցներին:
- Ազատագրկված կանանց և անչափահասների անձնական հագուստը, իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մանկահասակ երեխաների անձնական հագուստը և անկողնային պարագաները լվացքի մեքենայով լվանալու պայմաններ ստեղծել՝ դիտարկելով լվացքի մեքենաների քանակի ավելացման և էլեկտրական շորանոցներ տեղադրելու հարցը:
- Ազատագրկված կանանց տրամադրել իրենց չափին համապատասխանող միասնական նմուշի հագուստ: Տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ընդգրկված կանանց տաբատներ կրելու հնարավորություն տալ:
- Զգոնություն ցուցաբերել կալանավորված կանանց նկատմամբ և անհրաժեշտության դեպքում նրանց ապահովել սեզոնային հագուստով կամ այն ձեռք բերելու նպատակով հարազատների հետ կապն ապահովել քրեակատարողական հիմնարկի աշխատակազմի միջոցով:

Ազատագրկված կանանց զրոսանքի արդյունավետ կազմակերպման համար Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Ավելացնել մեկուսարանի մասնաշենքում զրոսախցերի քանակն այնպես, որ խցային պայմաններում պահվող ազատագրկված յուրաքանչյուր կին կարողանա օրենսդրությամբ ամրագրված զրոսանքի իրավունքից պատշաճ ձևով օգտվել:
- Առկա զրոսախցերը բարեկարգել և կատարել մաքրման աշխատանքներ՝ ապահովելով բավարար սանիտարահիգիենիկ վիճակ:
- Զրոսախցերում բավարար ծածկեր նախատեսել՝ զրոսանքի դուրս եկած կանանց եղանակային վատ պայմաններից պաշտպանելու համար:
- Առկա զրոսախցերը կահավորել և համալրել մարզասարքերով:
- Իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների համար նախատեսված զրոսաբակերը համալրել երեխաների տարիքային զարգացմանը համապատասխանող խաղերով և ժամանցի այլ միջոցներով: Այդ տարածքներն ապահովել փակ ծածկերով՝ եղանակային վատ պայմաններից երեխաներին պաշտպանելու համար:

Ազատագրկված կանանց կապն արտաքին աշխարհի հետ արդյունավետ ձևով ապահովելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.



- Քայլեր ձեռնարկել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի համար տրանսպորտային միջոց նախատեսելու ուղղությամբ:
- Բարեկարգել և վերանորոգել տեսակցության համար նախատեսված սենյակները:
- Կարճատև տեսակցության և մանկական սենյակներում լվացվելու և սանհանգույցից օգտվելու հնարավորություն ստեղծել:
- Երկարատև տեսակցության եկած անձանց, այդ թվում երեխաների համար զբոսանքի դուրս գալու հնարավորություն ստեղծել:
- Երկարատև տեսակցության եկած երեխաների համար մանկական սենյակ նախատեսել: Նրանց ապահովել տարիքային զարգացմանը համահունչ ժամանցային խաղերով:
- Դիտարկել կարճատև տեսակցությունների տրամադրման համար ավելի ընդարձակ սենյակ նախատեսելու կամ սենյակների թիվն ավելացնելու հարցը:
- Դիտարկել ազատազրկված կանանց բացառության կարգով անվճար հեռախոսաքարտեր տրամադրելու կամ հեռախոսաքարտերի սակագները մատչելի դարձնելու հարցը:
- Ազատազրկված կանանց համար խիստ անհրաժեշտության դեպքում ոչ աշխատանքային օրերին և ժամերին հեռախոսակապից և տեսակապից օգտվելու հնարավորություն նախատեսել:
- Քննարկել ազատազրկված կանանց անվճար ծրարներ և նամականիշներ տրամադրելու հարցը:
- Դիտարկել քրեակատարողական հիմնարկում տեսակապից օգտվելու համար նախատեսված համակարգչի թիվն ավելացնելու հարցը:

Ազատազրկված կանանց վերասոցիալականացման գործընթացն արդյունավետ ձևով իրականացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Քրեակատարողական ծառայությանն առաջարկում ենք.

- Ընդլայնել ազատազրկված կանանց զբաղվածության միջոցները:
- Դիտարկել կրթական ծրագրերին և վերասոցիալականացման միջոցառումներին կալանավորված և խցային պայմաններում պատիժ կրող կանանց մասնակցության հարցը:
- Դիտարկել կալանավորված և խցային պայմաններում պատիժ կրող կանանց համար աշխատանքային զբաղվածության միջոցներ ստեղծելու հարցը:

- Այնպիսի ծրագրեր մշակել, որոնք չեն խորացնի կանանց վերաբերյալ հասարակության մեջ առկա գենդերային կարծրատիպերը՝ բացառելով շեշտը հիմնականում կարի, ձեռագործ աշխատանքների վրա դնելու պրակտիկան:
- Հնարավորության դեպքում դիտարկել ազատագրկված կանանց համար ոչ աշխատանքային օրերին զբաղվածության հնարավորություններ ստեղծելու հարցը:
- Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կանանց համար իրենց հասանելի լեզվով կրթական կամ վերասոցիալականացման ծրագրեր կազմակերպել:
- Իրենց մայրերի հետ քրեակատարողական հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաների համար իրենց տարիքային զարգացմանը համապատասխանող միջավայր և ժամանցի միջոցներ ապահովել:
- Հիմնարկի մարզասենյակները և գրադարանները համալրել համապատասխանաբար նոր գրքերով, այդ թվում՝ օտարալեզու գրականությամբ և մարզագույքով:
- Դիտարկել կանանց տեղամասի մասնաշենքում գրադարանավարի հաստիքը համալրելու, մեկուսարանի մասնաշենքում գրադարան և գրադարանավարի հաստիք նախատեսելու հարցը:
- Վերանորոգել քրեակատարողական հիմնարկում տեղակայված դպրոցի մասնաշենքը, տեղադրել ջեռուցման և օդափոխության համակարգ, դասասենյակները կահավորել նոր գույքով, այդ թվում՝ ուսումնական, սպորտային միջոցառումների անցկացման համար համապատասխան պայմաններ ստեղծել, վերանորոգել ակումբի մասնաշենքը և բարելավել գրադարանում պահվող գրքերի պահման պայմանները:

Պրոբացիայի շահառուների վերասոցիալականացման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Արդարադատության նախարարությանը և Պրոբացիայի ծառայությանն առաջարկում ենք.

- Բարելավել և ընդլայնել Պրոբացիայի ծառայության՝ որպես շահառուների հետ աշխատող առաջնային կառույցի հոգեբանական և վերականգնողական աշխատանքների ծավալը:
- Վերականգնողական և վերասոցիալականացման բաժիններ ձևավորել Պրոբացիայի ծառայության մարզային մարմիններում:
- Վերասոցիալականացման և վերականգնողական աշխատանքներում ընդգրկել այլընտրանքային պատիժ կրող անձանց:

- Պրոբացիայի կին շահառուների հետ առողջության պահպանմանն ուղղված թեմաներով իրազեկման աշխատանքներ կատարել՝ այդ նպատակով համագործակցելով առողջապահական կազմակերպությունների հետ: Նրանց շրջանում բարձրացնել առողջ ապրելակերպի մասին իրազեկվածությունը՝ շեշտը դնելով այնպիսի թեմաների վրա, ինչպիսիք են հուզական բարեկեցությունը, մարմնի դրական ընկալումը:
- Պրոբացիայի կին շահառուների հետ խորհրդատվական և իրազեկման բազմաբնույթ աշխատանքներ կատարել՝ շեշտադրելով փոխօգնության մթնոլորտի ձևավորումը, հուզական գրագիտության բարձրացմանն ուղղված մասնագիտական աշխատանքը, ինչը կօգնի կոնֆլիկտներին արձագանքման գրագետ հմտություններ ձեռք բերել: Դա կարող է ներառել հետևյալ թեմաները՝ ինքնաճանաչման և հույզերի ճանաչման հմտություններ, գիտելիքներ հույզերի ժառանգման, էմոցիոնալ հիշողության, հուզական դաստիարակության մասին, հույզերի կարգավորման և ինքնատիրապետման տեխնիկաներ, կոնֆլիկտների առաջացման պատճառները, կոնֆլիկտների դրսևորման փուլերը և ձևերը, կոնֆլիկտների ժամանակ առավել հաճախ հանդիպող սխալները, կոնֆլիկտի հաղթահարման ուղիները, կոնֆլիկտների կառավարման տեխնիկաները:
- Պրոբացիայի կին շահառուների շրջանում ընդլայնել գրագետ ծնողավարման հմտություններին ուղղված աշխատանքը՝ շեշտադրելով հետևյալ թեմաների շուրջ գիտելիքի տարածումը՝ ծնողավարման ձևեր, դաստիարակության ոճեր, դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը և հետևանքները, երեխաների տարիքային ճգնաժամերը և դրանց հաղթահարման մեխանիզմները, մանկական տրավմաները և դրանց հետևանքները, երեխա-ծնող հուզական կապի ստեղծումը և ամրապնդումը, ծնողական սիրո, ջերմության, հոգատարության և խնամքի կարևորությունը, երեխաների կարիքները և սոցիալ-հոգեբանական պահանջմունքները, երեխաների իրավունքները, բռնության տեսակները, հետևանքները և կանխարգելման եղանակները:

Այս առաջարկություններն ուղղված են Արդարադատության նախարարությանը, Առողջապահության նախարարությանը, Պրոբացիայի ծառայությանը, Քրեակատարողական ծառայությանը և Քրեակատարողական բժշկության կենտրոնին: Դրանք վերաբերում են ազատագրված կանանց շրջանում համավարակի տարածման ռիսկերը

նվազեցնելուն, ազատագրկված կանանց շրջանում համավարակի կանխարգելման, խնամքի և բուժման արդյունավետությունը բարձրացնելուն, նրանց առողջության պահպանմանը և իրավունքների ապահովմանը, կալանքից և պատժից ազատման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելուն, համավարակի ժամանակ խափանման միջոցների և պատիժների կիրառման գործընթացում կանանց խոցելիությունը դիտարկելուն, քրեակատարողական և պրոբացիայի համակարգում համավարակի դեմ պայքարի համատեքստում կանանց թվային ներկայացվածությունը, ըստ այդմ՝ սեռային բաշխմամբ վիճակագրություն վարելու կարևորությունն ընդգծելուն:

- *Քրեակատարողական հիմնարկներում համավարակի կանխարգելման, հայտնաբերման, մեկուսացման և բուժման կազմակերպման պլանները մշակելիս դիտարկել ազատագրկված կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:*
- *Ազատագրկված կանանց համավարակի կանխարգելման և բուժման գործընթացներում դիտարկել որպես առաջնահերթ ռիսկային խումբ:*
- *Ազգային առողջապահական համակարգում կանանց տարբեր խմբերի շրջանում համավարակի կանխարգելման և բուժման կազմակերպման նպատակով մշակված ընթացակարգերը ներառել քրեակատարողական առողջապահական համակարգի կողմից մշակված ընթացակարգերում:*
- *Հաշվի առնելով ազատագրկված կանանց ֆինանսական խոցելիությունը՝ դիտարկել նրանց շրջանում համավարակի կանխարգելման և բուժման որոշ ծառայություններ բացառության կարգով անվճար կազմակերպելու հարցը:*
- *Մշակել քրեակատարողական հիմնարկներում համավարակի պայմաններում բժշկական օգնության և սպասարկման իրականացման կարգ:*
- *Մշակել ազատագրկված անձանց շրջանում համավարակի կանխարգելման, բուժման և այդ գործընթացի նկատմամբ վերահսկողության իրականացման, համավարակի պայմաններում առողջապահական ծառայությունների սահմանափակման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների գործառույթները: Այդ փաստաթղթերում դիտարկել*

ազատագրկված կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:

- Դիտարկվել ազատագրկված կանանց և անչափահասների մասնակցությունը քննչական և դատավարական գործողություններին համավարակի ժամանակ հեռավար ապահովելու հարցը:
- Հոգեբանների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպել՝ ազատագրկված կանանց համավարակի ժամանակ ճգնաժամային աջակցություն և խորհրդատվություն տրամադրելու նպատակով:
- Ազատագրկված կանանց հոգեբանական վիճակի բարելավման և հոգեկան առողջության վերականգնման ուղղությամբ հասցեական ծրագրեր մշակել համավարակի ժամանակ:
- Դիտարկվել «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի՝ համավարակի կանխարգելմանն առնչվող գործառույթները պատշաճ կատարած աշխատակիցներին պարգևավճար կամ հավելավճար տրամադրելու կամ նրանց աշխատավարձը բարձրացնելու հարցը:
- Հիմնարկի աշխատակիցների համար մշակել համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ:
- Դիտարկել ազատագրկված կանանց և իրենց մայրերի հետ հիմնարկում պահվող մինչև 3 տարեկան երեխաներին տրամադրվող սննդի չափաբաժիններն ու կալորիականությունը և անձնական հիգիենայի պարագաների չափաբաժինները վերանայելու և համավարակի ժամանակ բացառության կարգով ավելացնելու հարցը:
- Ազատագրկված օտարերկրացի կանանց համար մշակել համավարակի ժամանակ տեսազանգից և հեռախոսազանգից օգտվելու առավել ճկուն ընթացակարգ:
- Դիտարկել ազատագրկված կանանց համավարակի ժամանակ անվճար հեռախոսաքարտեր տրամադրելու հարցը: Մշակել ազատագրկված անձանց համավարակի ժամանակ հեռախոսակապի և տեսակապի տրամադրման կարգ:

- Ազատագրկված բոլոր անձանց համար համավարակի ժամանակ հեռախոսակապից և տեսազանգից օգտվելու հավասար պայմաններ ստեղծել:
- Ազատագրկված անձանց համավարակի ժամանակ տեսակցությունների, հեռախոսազանգի և տեսազանգի տրամադրման ուղղությամբ մշակված ընթացակարգերը ամփոփել մեկ միասնական փաստաթղթում:
- Համավարակի ժամանակ զբոսանքի տրամադրման հարցում բացառության կարգով միանման օրենսդրական ընթացակարգեր նախատեսել ազատագրկված բոլոր կանանց համար:
- Դիտարկել կրպակից գնվող ապրանքների սակագները վերանայելու և կրպակից գնումներ կատարելու էլեկտրոնային համակարգ ներդնելու հարցը:
- Մշակել քրեակատարողական հիմնարկներում համավարակի ժամանակ կրթական ծրագրերի, վերասոցիալականացման միջոցառումների և ազատագրկված անձանց աշխատանքային գործունեության կազմակերպման մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով վերաբերելի գերատեսչությունների ու կառույցների և դրանց աշխատակիցների, այդ թվում՝ գործատուների գործառույթները: Այդ փաստաթղթերում դիտարկել ազատագրկված կանանց խոցելիությունը՝ նրանց ներհատուկ կարիքներին համահունչ գործողություններ նախատեսելով:
- Դիտարկել ինքնագործ միավորումների անդամ հանդիսացող դատապարտյալներին համավարակի վերաբերյալ իրազեկման կամ տեղեկատվության տարածման գործընթացներում ներգրավելու հարցը:
- Վերանայել ազատագրկված անձանց տրամադրվող կարճաժամկետ մեկնումների քանակի կամ տևողության հետ կապված հարցերը:
- Քրեակատարողական հիմնարկներում աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացակարգ նախատեսել:
- Քրեակատարողական հիմնարկներում հեռակա (հեռավար) կրթության իրականացման կարգ մշակել:
- Մշակել ազատագրկված անձանց աշխատանքային գործունեության հեռավար կազմակերպման կարգ:

- Վերանայել ազատագրկված անձանց խրախուսանք տրամադրելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և ընթացակարգերը համավարակի ժամանակ:
- Վերանայել ազատագրկված անձանց կարգապահական տույժի ենթարկելու, նրանց նկատմամբ ֆիզիկական ուժ և հատուկ միջոց կիրառելու վերաբերյալ օրենսդրական կարգավորումները և ընթացակարգերը:
- Ղիտարկել առավել խիստ կարգապահական տույժի միջոցները կիրառելուց ձեռնպահ մնալու կամ դրանց կիրառման ժամկետները հետաձգելու հարցերը:
- Մշակել համավարակի ժամանակ անձանց կալանքից և պատժից ազատման վերաբերյալ մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով օրենսդրությունից բացառություն կազմող այն հիմքերը, որոնց կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված անձանց խոցելիությամբ: Մասնավորապես, քննարկել պատժից ազատման գործընթացում համավարակը՝ որպես արտակարգ հանգամանք, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդությամբ վարակված լինելը կամ վարակման վտանգը՝ որպես պատժից ազատման առանձին հիմք դիտարկելու հարցը: Արտակարգ դրության կամ հանգամանքների հիմքով կալանքից ազատման վերաբերյալ կարգավորումներ կամ ընթացակարգեր նախատեսել: Կալանքից և պատժից ազատման գործընթացներում որպես կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելի խումբ դիտարկել կանանց:
- Ազատմանը նախապատրաստելու ընթացակարգեր նախատեսել կալանավորված անձանց համար: Կալանավորված անձանց և դատապարտյալներին ազատվելուց առաջ համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերի և դրանց դիմելու կարգի մասին իրազեկման աշխատանքներ կատարելու վերաբերյալ գործառույթ նախատեսել քրեակատարողական հիմնարկների վարչակազմի համար: Քրեակատարողական հիմնարկներից ազատված անձանց համար սոցիալական աջակցության առանձին ծրագիր մշակել: Նրանց համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերում դիտարկել որպես առանձին շահառու խումբ:

- Մշակել մեկ միասնական ուղեցույց կամ գործողությունների ծրագիր՝ սահմանելով համավարակի ժամանակ կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների և ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների նշանակման վերաբերյալ այն սկզբունքները, որոնց կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված անձանց խոցելիությամբ: Այդ գործընթացներում որպես կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ խոցելի խումբ դիտարկել կանանց:
- Համավարակի ժամանակ Պրոբացիայի ծառայության համար խափանման միջոցների և պատիժների կատարման, վերահսկողության, վերասոցիալականացման և այլ գործառույթների իրականացման վերաբերյալ համապատասխան օրենսդրական կարգավորումներ և ընթացակարգեր:
- Պրոբացիայի կին շահառուների համար համավարակի ժամանակ պատժի կրման, վերահսկողության իրականացման և վերասոցիալականացման ծրագրերի մասնակցության այլ ընթացակարգեր մշակել՝ նկատի առնելով նրանց խոցելիությունը:
- Դիտարկել Պրոբացիայի ծառայության աշխատակիցների համար համավարակին արձագանքման և համավարակի պայմաններում գործառույթների կատարման վերաբերյալ հատուկ պատրաստության դասընթացներ կազմակերպելու հարցը:
- Քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների, ստորաբաժանումների բուժաշխատողների, ազատազրկված անձանց և պրոբացիայի շահառուների շրջանում թեստավորման, ՊՇՌ հետազոտության, պատվաստման, վարակվածության, դրական և մահվան դեպքերի վերաբերյալ առանձնացված հաշվառում կատարելու ընթացակարգ ստեղծել:
- Քրեակատարողական հիմնարկներում համավարակի նկատմամբ խոցելի խմբերի ազատազրկված անձանց վերաբերյալ հաշվառում կատարել:
- Արտակարգ դրությամբ և կորոնավիրուսային հիվանդության նկատմամբ անձանց խոցելիությամբ պայմանավորված կալանքից և պատժից ազատման, կալանքին այլընտրանք հանդիսացող խափանման



*միջոցների և ազատագրկմանն այլընտրանք հանդիսացող պատիժների կիրառման վերաբերյալ հաշվառում կատարել:*

- *Վերը թվարկված գործընթացներում առանձնացված հաշվառում կատարել կանանց վերաբերյալ ընդգծելու համար այդ գործընթացներում վերջիններիս թվային ներկայացվածությունը:*